**Հավելված**
**ՀՀ առողջապահության նախարարի**
**«24» օգոստոս 2022թ.**
**N 3914 - Ա հրամանի**

# ԾՐԱԳԻՐ

## ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ 4-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2022թ.-ից կրկնողաբար , ք. Երևան

(«Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոց)

Հայ օգնության ֆոնդ

| Թեմա | Նկարագիր | Տևողություն | Պատասխանատու | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| 1. Մանկական ռևմատոլոգիա, ախտորոշման ժամանակակից մեթոդները (բժշկական գենետիկա) և դրանց արդյունքների մեկնաբանությունը | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>09:00-15:00 | Գայանե Ամարյան<br>Կարինե Սիմոնյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br>• Տիրապետել ախտորոշման ժամանակակից մեթոդների հնարավորությունների մասին տեղեկությանը<br>• Ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող վիճակները մանկաբուժությունում, տիրապետել ստամոքսային, ծայրամասային երակային |
| 2. Մանկական գաստրոէնտերոլոգիա (քրոնիկ գաստրոդուոդենիտ, խոցային | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում | 18 ժամ<br>09:00-15:00 | Աշոտ Սարգսյան<br>Գայանե Ամարյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հիվանդություն, հեպատիտ, ցիրոզ, պորտալ հիպերտենզիա, պանկրեատիտներ, ոչ սպեցիֆիկ կոլիտ, Կրոնի հիվանդություն, մալաբսորբցիայի համախտանիշի տարբերակում) | • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | | | կաթետերների տեղադրման հմտություններին, ն/ե հեղուկների ճիշտ ընտրություն և քանակների ճիշտ հաշվարկ<br>• Հիվանդին նշանակել բուժում/ սննդակարգ՝ ժամանակակից ուղեցույցներին համապատասխան<br>• Վարել ծանր, ծայրահեղ ծանր վիճակներում գտնվող հիվանդին<br>• Կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար |
| 3. Սնուցում, առողջ և հիվանդ երեխաների սնուցում: Դժվար ուտող երեխաներ: Սննդակարգերի մշակում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 12 ժամ<br>09:00-15:00 | Զիբա Վարդանյան<br>Գևորգ Բոյաջյան<br>Կարինե Սիմոնյան | |
| 4. Մանկական պուլմոնոլոգիա/ ալերգոլոգիա (սուր թոքաբորբեր, բրոնխիտ, կրուպ, քրոնիկ հազ, մուկովիսցիդոզ, բրոնխիալ ասթմա/ շնչառական ալերգոզներ): Ինհալացիոն թերապիայի հմտությունների ուսուցում | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 18 ժամ<br>09:00-15:00 | Լիլիթ Վարդանյան<br>Գևորգ Բոյաջյան<br>Կարինե Միրզաբեկյան | |
| 5. Մանկական նեֆրոլոգիա (սուր գլոմերուլոնեֆրիտ, նեֆրոտիկ համախտանիշ, միզուղիների ինֆեկցիա, ռեֆլյուքս, ծանոթացում հեմոդիալիզի կլինիկայի աշխատանքներին, մեթոդներին) | • Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների | 12 ժամ<br>09:00-15:00 | Սերգեյ Սարգսյան<br>Կարինե Սիմոնյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. Տարածված մանկական ինֆեկցիաներ: Մասնակցություն առաջնային օղակի ընդունելությունների<br><br>7. Անհետաձգելի իրավիճակները մանկական տարիքում, ախտորոշում, օգնություն/ բուժում, ճիշտ տեղափոխման կազմակերպում (ըստ անհրաժեշտության): Ծայրամասային և կենտրոնական երակային կաթետրի տեղադրում: Միզային և ստամոքսային կաթետրների տեղադրում, գործնական հմտությունների ուսուցանում, ներերակային հեղուկների հաշվարկ: Համարժեք թթվածնաբուժում, մոտեցումների ուսուցանում | • Տեսական հարցերի քննարկում<br><br>• Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում<br><br>• Առավոտյան համայց<br>• Հիվանդների քննարկում<br>• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>• Տեսական հարցերի քննարկում | 18 ժամ<br>09:00-15:00<br><br>12 ժամ<br>09:00-15:00<br><br>12 ժամ | Կարինե Սիմոնյան<br>Սերգեյ Սարգսյան<br><br>Աշոտ Գյուլբուդաղյան<br>Լիլիթ Վարդանյան<br><br>Աննա Շիրինյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ)<br><br>Դասախոսություններ ՀԳԲԳ-ում<br><br>Համակարգչային գրագիտության դասընթացներ[1] ՀԳԲԳ-ում<br><br>ՇՄՁ արդյունքների ամփոփում[2] | Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում<br><br>• Գերիատրիայի հիմունքները: Ծերացումը որպես 21-րդ դարի հիմնախնդիր<br>• Բժշկութուն և իրավունք<br>• Ցավի կառավարում<br>• Ալերգիկ հիվանդություններ<br>• Արյունաբանություն<br><br>MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց<br><br>Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 6 ժամ<br><br>24 ժամ<br><br>10:00-12:00 | Արթուր Թորոսյան<br>Նարինե Մովսիսյան<br>Վիոլետա Զոփունյան<br>Արմինե Հակոբյան<br>Երվանդ Հակոբյան<br><br>Համբարձում Սիմոնյան<br>Առնո Հովհաննիսյան | |

[1]Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ:

[2]Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները պետք է ներկայացնեն կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցները կարող են օգտվել Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված չէ (09:00-15:00) 6 ժամվա մեջ;

Թիրախային լսարան՝ մանկաբույժներ, ընտանեկան բժիշկներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 15-20 հոգի: